

ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂՈՐԴԱՆԵՐԻ ՄԱՍԻՍ

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լոյսով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանները բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կէկէլ, Նատալիա և Արչակ Բաղդասարեանները, Նոյնէ Յարու-
թիւնեան Յիցիկեան և Նիքիթա Աւետիքեան Տէր-Աբրահամեան, խորին
ցաւով յայտնելով առաջին երեքը իրանց անմուռնալ մօր, չորրորդը իր
սկեսուրի և հինգերորդը իր զոքանի:

ԱՆՆԱՅԱԿՈՒԹՅԱՆ ՏԻՑԻԿԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 11-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին
հետոյ բերել յուզարկաւորութեան կիրակի օր, մայիսի 16-ին, առաւօտեան 10 ժամին,
Խնդրեալ պաշտօն, տուն Սողոմոնեանցի, դէպի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցին և
այնտեղից Խօջիվանքի դերձակատունը:
Ամբողջը շարափ օր, մայիսի 15-ին, երեկոյեան 7 ժամին: (ո. յ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աքսորի վերադարձը.—Ներքին Տեսչութիւն.
Մամուլ. Պատկերահանդէսը «Փառքի տաճարում».
Օգտակար մի գործ Բագուի նաւթարդիւնաբե-
րոյնքի XIII ժողովը. Նամակ Վաղարշապա-
տից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Գերմանիայից.—ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵ-
ՌԱԳԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ.—Հին ուրուականը:

ԱՔՍՈՐԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ

Պաշտօնապէս որոշված է ոչնչացնել
պատժելու այն ձևը, որով յանցաւորնե-
րին ուղարկում են Սիբիր, իբրեւ քրո-
նաւորի Ներքին մայիսի 6-ին Փաշաւոր
Վայրը Բարձրագոյն Հրամայեց մշակել
աքսոր ոչնչացնելու կամ սահմանափակե-
լու ճարգիր և դրա համար կազմել ար-
դարադատութեան միջոցների նախագահ-
ութեամբ մի յատուկ յանձնաժողով: Այդ
յանձնաժողովի պարագմունքի առարկա-
ները պէտք է լինեն. աքսորի փոխարէն,
որ վճռում են դատարանները, մշակել
համապատասխան պատժի ուրիշ եղանակ-
ներ. ոչնչացնել կամ սահմանափակել այն
աքսորը, որ մինչև այժմ տեղի էր ունե-
նում գիւղական կամ մեշտանակի հա-

մայրների վճռով. մշակել հասարակա-
նային և աշխատանքի տներ հաստատե-
լու ճարգիրներ, և որոշել այն ծախսերը,
որ հարկաւոր կը գան Բարձրագոյն Հրա-
մանը ի կատար ածելու համար:

Սիբիրը, իբրեւ քրոնաւորի, յարմար էր
այն ժամանակ, երբ նա բողոքովին ամայի
և անբնակ մի երկիր էր: Բայց վերջին
դարի և մանաւանդ նրա երկրորդ կէսի
ընթացքում Սիբիրը այնքան հարստա-
ցաւ ազգաբնակչութեամբ, գիւղերով և
քաղաքներով, որ այժմ նա իր ընդ-
հանուր կազմով բացառութիւն չէ կազ-
մում կայսրութեան միւս մասերից, որ-
տեղ նոյնպէս պատահում են ընդարձակ
տարածութիւններ նոսր ազգաբնակչու-
թեամբ: Սիբիրի մէջ ապրող ժողովուրդը
նոյնպէս կարիք ունի հանգիստ և կանո-
նաւոր հասարակական և վարչական կեանք
վարելու, ինչպէս և ուրիշ տեղերում: Ե-
թէ յանցաւոր մարդիկ այնպիսի են
կենսակցելու եւրոպական Ռուսաստանում,
նրանք նոյնպէս այնպիսի են Սիբիրում:
Մի հանգամանք ևս փոխել է Սիբիրի դը-
րութիւնը. առաջվայ ժամանակները Սի-
բիրը կտրված էր Ռուսաստանի եւրոպա-
կան մասից և այնտեղ գնացողը, այլ և
այդ չունենալով վերադառնալու, կամայ-
կամայ հաստատվում էր նոր երկրում:
Իսկ այժմ, երբ երկաթուղին և շոգենա-

ւային երկաթուղիները մտցրել են Սիբի-
րը զիւրացրած հաղորդակցութեան ընդ-
հանուր ցանկի մէջ, նա այլ ևս կտը-
ված և բաժանված մի երկիր չէ, այլ շատ
մօտեցրած և միացրած: Ցանկացողները
շատ հեշտութեամբ կարողանում են փախ-
չել քրոնաւորից և դառնալով օրէնքից
զուրս անձնաւորութիւններ, պատիժ են
դառնում այն տեղերի, իսկ յաճախ իրանց
ծննդավայրերի համար, որտեղ նրանք
ծածկվելով իշխանութիւնից, իրանց հա-
մար ապրուստ են հայթայթում:

Բարձրագոյն Հրամանը պատուիրում է
չը սպասել մինչև ամբողջ ճարգիրը իր
մանրամասն միջոցով մշակվի և յետոյ
նրան գործադրել, այլ ներկայացնել մաս-
մաս այն բոլորը, ինչ որ պատրաստ կը լի-
ւի, պետական խորհրդի և մինիստրների
կօմիտէի ընտելութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒՆ

Երբէք մենք չենք կարող երևակայել, որ հայ հո-
գևորականութիւնը գտել է ազգային գոգերից ու
առաջնորդներից ազատվելու արմատական միջոց:
Անշուշտ այսպիսի գիտի հեղինակը արժանի է
արձանի և իմէ մինչև այժմ ոչ ոք չէ մտածել
երախտագիտական այդ ցոյցի մասին, պատճա-
ռը, երևի, այն է, որ գիտ անողը Վրկիկայի
կաթողիկոս Սկրիպկին է, որ մեռաւ մի քանի
տարի առաջ, իր թողնելով մի յիշատակ, որ
փոքր ի շատէ ցաւալի դարձնէր այդ զորուս-
տը: Ահա այդ մարդու գտած միջոցն այն է,
որ, ինչպէս հաղորդում է «Սուրհանդակ» լրա-
գիրը, նա արգելած է եղել Վրկիկայում ազ-
գային օր և է կալուած վարձով տալ հային:
Սրաբար գիտ է, չէ: Տառաւ գոգերից ազատվե-
լու ամենալաւ միջոցն է իր թողնել նրանց մօ-
տենալ տանը: Եւ «Սուրհանդակ» այսպիսի
խորհրդածութիւն է անում այդ առիթով:

Անողը որ Օրոյտը և գաւառներում մէջ Ժո-
ղովներու անդամ չեն եղել, կամ ազգային

կալուածէ վարձուր մը դուրս հանելու հար-
կին մէջ չեն գտնուել, շատ դժուարաւ պիտի
հասկանան ի՞նչ ինչ կը նշանակէ ազգային կա-
լուածները հայու վարձու չը տալը: Եթէ այսօր
բոլոր եկեղեցիներու հայիկները մանրամաս-
նօրէն այլէ անցունեն, խել մը դուժարներ
պիտի տեսնուին, որոնք այս կամ այն անձին
կոկորդը անցեր են: Պատճառ: Որովհետեւ այն
անձը ժամանակ մը լաւ դիբել տէր է եղեր,
և յետոյ գործը արուեր է, ու կարելի չէ ե-
ղեր դատարան դիմել ու իրաւունք վերահաս-
տատել: Ուրիշ մը թաղին մէջ ազգային դիբը
մը ունի, և հետևաբար այն ալ ազգային կա-
լուածը ձրի պէտք է գործածէ: Երբորդ մը
տարին երկու երեք հարկեր դրուշ կը նուրբէ
եկեղեցիի և դպրոցի. ուստի այն ալ պէտք է
որ չորս հարկեր դրուշ վարձք բերող խառնութե-
մը երկու հարկեր դրուշ ինքի նստի. հոգ չէ թէ
տարին այս երեսնէ 20 ոսկիէն աւելի գումար
մը կը կորսուի, կը բաւէ որ այդ մարդը տա-
րին մէկ երկու հարկեր դրուշ կուտայ ազ-
գային անդուկին: Բայց ասոնց դէմ չենք տե-
սած կամ չենք պատահած այնպիսի մէկու մը,
որ 100 դրուշ վարձք բերող կալուածի մը,
եկեղեցւոյ կամ դպրոցի օգտին համար 50
դրուշ աւելի տայ: Ասոնցմէ դուրս կայ նաև
ուրիշ բաւական դժուարին կէտ մը: Եթէ կը-
նաս, ազգային կալուածէ մը վարձուր մը
դուրս հանել փորձէ: Անմիջապէս երեկի ու
աներկոյթ բերաններ կը սկսին խօսիլ. «Այս
ինչ է, այն ալ ազգային մէկ անհատը չէ մի,
այս հաստատութիւնները աղաները իրենց
հետ բերին, չէ մի որ, այս կամ այն բարե-
բարը կուտակեց»:

Խօսք չունինք այս իրողութիւնների դէմ.
հաստատում ենք որ ամեն տեղ հայերի մէջ
այդպէս է և «Սուրհանդակ» գծագրածը ընդ-
հանուր ցաւի մի թիվն է պատկերն է. կան ազ-
գային տղերքներ, կան կեղեքներ, որոնց ա-
բարքները «Հազար ու մէկ դիշերներ» պատ-
մութիւններն են յիշեցնում: Բայց միթէ Վրկի-
կայում գործադրվող միջոցը միանգամայն ա-
պահովութիւն է ի՞նչ ազգային կալուածները կը ծա-
ռայեն այն նպատակներին, որոնց չնորհիւ նրանք
գոյութիւն ունեն: Ձեռք կարծում: Վրկիկայի
կաթողիկոսը գուցէ կարողացել է մասամբ դա-
տարկել ազգային գոգերի գրգռանքը. բայց ի՞նչ
գրգռանք... Ահա թէ ինչ մեծ բան է մտաւորա-
ւորութիւն եկեղեցւո կամ դպրոցի համար բոլոր-
ովին միեւնոյն չէ թէ ով է ծծում իր եկա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

X

Օգնեցէք, աղաղակում է հայր Եարմրտան,
տպագրելով Աղաբեան պատրիարքի, դօմինի-
կեան վարդապետների և Տ. Զնոյայանի յաղ-
թական ննայարծ աղմուկներով լի գրութիւն-
ները Վանի կրօնական ճոխ որսի մասին: Օգ-
նեցէք, բայց ինչի:

Հայր Եարմրտան կոտորածների ժամանակ
երևան ելաւ իբրեւ մի շատ յարգելի անձնաւոր-
ութիւն: Հանձնօրի կախարդանքներին ենթարկ-
ված Ֆրանսիայում միայն նա էր, որ սարսա-
փի և անէծքի աղաղակ բարձրացրեց թիւրքա-
կան զաւաճողութիւնների դէմ. միայն նա էր, որ
կոտորածներին խալտաւակող զօկուսներին
էր հրատարակում, դիմումներ էր անում բրիտ-
տոնեայ աշխարհին, խօսում էր բրիտանիայ
նահատակներին, նրանց անուր տանջանքնե-
րին: Մեր գրութեան շրջանակները չեն թող-
նալու մեզ յիշատակել, թէ ինչքա՞ն է ինչքա՞ն
էր Տ. Եարմրտան դժբաղդ թիւրքահայերի
մասին: Հետաքրքրվող այդ գրութիւնների նմուշ-
ները կարող է գտնել «Братская Помощь» գրքի երկ-
րորդ հրատարակութեան առաջին մասում: Մենք
բաւականանա՞նք մի քանի փաստերով: Հ. Եար-
մրտան հրատարակեց «Հայկական մարտիրոսա-
գրութիւն» բրօշուրը. 1897 թ.ին հրատարակած
մի գրքի առաջաբանում նա գրում էր. «Ժամա-
նակին փողոցի այս հրդեհն ակամայ յիշեցնում
է մի ուրիշ, աւելի սարսափելի խարոյկ, Ուր-

Ֆայի եկեղեցւո խարոյկը, որի մէջ մուսուլման-
ները դէպի բրիտանիկութիւնը տաճած առե-
ւութիւնից ողջ-ողջ այրեցին ոչ թէ 130, այլ
3000-ից աւել կիւն, ջահիլ աղլիկ և մանուկներ...
Աւելի քան 300,000 հայեր սպանվեցին քրի-
ստոնական հաւատի համար, թողնելով տա-
նակ հազարներով որբեր: Մի ուրիշ տեղ Տ.
Եարմրտան գրում էր, որ «ձեռք է մեկնում
այդ այրիների և որբերի անուշտի և յետոյ ա-
ւելացնում էր. «Միթէ քրիստոնեաների արկուն
ու պատիւը աւելի բիշ ուշադրութեան են ար-
ժանի, քան Թիւրքիայի պարտաւէրների շահերը:
Ընդհանուր մարդասիրութեան, բրիտանի-
կան եղբայրակցութեան անուշտով կրկնու
էքներ կարգալով Տ. Եարմրտան բաւական խո-
շոր նպատակներ ստացաւ: Բայց եթէ ոչ բոլորը,
գոնէ մեծ մասը նա յատկացրեց կաթողիկ պրօ-
պագանդային: Լսե՛ք Տ. Զնոյայանի վկայու-
թիւնները: Այդ նպատակները շատ յարմար
ժամանակին ստացվեցին և օգնեցին ինձ, որ
դուրս գաւ դժուարութիւնից: Ձեռք գործը մեզ
շատ օգնեց նախընթաց տարիներում և նոյն-
պէս շատ նպատակներ կը կրօնի օգտին ձեռք
բերած հետեւանքներին: Նամակի համարեա
իրաւաբանիւր տողի մէջ Տ. Զնոյայան խնդրում
է օգնութիւն՝ ընդհանուրները ամբացնելու հա-
մար: Եւ ի վերջոյ, յայտնելով թէ Վանի նորա-
դարձ մանուկները, յոյս ունեն, հէնց իրանք
մի աւելի առաւու հունձի սերմեր կը լինեն»,
ասում է Տ. Եարմրտան: Ձեռք համակրու-
թիւնները դէպի մեր գործը ինձ յոյս են տա-
լիս, սրբազան, որ այդ գործը պահպանելու
համար, այս կրիտիկական հանգամանքների մէջ,
չեն պակասի ձեր նպատակները: Իսկ Վանի
զօմինիկեաներից մէկը եկեղեցւանում է. «Տաւան
և եթէ տարի մենք սերմանում ենք, տընում
և ահա այսօր հնձում ենք»:

Եւ հայր Եարմրտան աղաղակում է. «օգնե-
ցէք: Օգնեցէք, որ կաթողիկանայ ամբողջ Վա-
ստանից, որ քրիստոնեաներին աղատեն
«Բրիտանիկ հերձուածից», որ «ուսական հեր-
ձուածը» և «բողոքական հերձուածը» հունձ
լուսնենան...»

Պայթեց: Դիմակները պատուված են, շարքը
լուսնով: Քրիստոնեայ հայեղբայրները, որոնց
մարտիրոսագրութիւնն էր հրատարակվում, ու-
րոնց անուշից ողորմութիւն էր խնդրվում, այ-
սօր հերձուածողներ են: Որբերի և այրիների
համար հաւաքված դրամը մուրհակներով բա-
ժանվում է սովատանջներին՝ կաթողիկ դառ-
նալու պայմանով: Այն վէճ, սքանչելի կոչերից
յետոյ այսքան դժու, ողորմելի նպատակներ,
թիւրքաց կառավարութեան դէմ շանթեր ար-
ձակելուց յետոյ հանութեամբ արձանագրել, թէ
սպանողները այժմ հովանաւորում են կաթողիկ
պրօպագանդային...

Եւ սակայն կարծում էին թէ Տ. Եարմրտան
կարող է մի երկրորդ Պաղատան դառնալ հայե-
րի վերաբերմամբ. որքան չուտ համոզվեցին
թէ Պաղատաններին հասնելը այնքան էլ հեշտ
չէ: Վոչման վնասութեան վրա մնալու համար
դուք պիտի պատուիրէիք Զնոյայաններին, որ
սովի այս թշուառ տարում չը համարձակվին
հոգի որսալ նպատակ գնով. դուք պիտի ճշմա-
րիտ հաւատացեալներ որոնէիք և ոչ թէ կիսա-
մեռ մարդկանց, որոնց համար մի փշուր հացը
բարձր է: Քրիստոնեութեան, մարդասիրութեան
պատիւը պահանջում էր ոչ մի շահ, ոչ մի ա-
կնկալութիւն, ոչ մի առևտուր չը դնել այն
հացի մէջ, որ տրվում է սոված մանուկին,
թշուառ օրը: Որքան վնաս կը լինէր բուն բրի-
տոնէական, անշահաւէր բարեգործութեան տե-
սարանը. որքան պատկառելի հեղինակութիւն

ձեռք կը բերէիք, եթէ դժբաղդութեան ծովի
մէջ դուք առանց յետին տաքերի զմարտու-
թեան հերոսութիւններ կատարէիք: Ձեր հունձն
այնուհետեւ կը լինէր հունձ... Բայց ի՞նչ ինչ
եղաւ: «Մշակի» թղթակցից ասում է, որ այժմ
ժողովուրդը նրա կողմն է, ով աւել կը տայ...
Ահա ինչ արաւ կղերք: Վայեցե՛ք ձեր զգուշի
հունձը...

Վիկտոր Հիւգօն իր սքանչելի բանաստեղծու-
թիւններից մէկի մէջ («Confrontation»), ունի
այսպիսի տողեր. «Օ՛հ, խօսեցէք, դիմակներ. ով
ձեզ սպանեց, ով: Ո՛վ ձեր կրօնի մէջ դաւա-
ճանաբար դաշտն խրեց: Սկսե՛ք քեզանից, ով
սուտեր, ես ընտրեալ միջնորդ եմ: Ո՛վ ես դու:
—Վո՛րդ: —Սպանողը: —Փարոյիշը: Եւ ճիշդ է:
Կաթողիկ կղերք թիւրքաց Հայաստանում խալ-
տառակեց ոչ միայն իրան, այլ և ամբողջ բրի-
տանիկութիւնը: Ուստիղական տնէնանք այնքան
միջնայրեց նրա խելը, որ առանց ալ ու ձախ
նայելու նա խրվեց այնպիսի անպատիւ, ամօ-
թալի գործերի մէջ, որոնք իրաւաբանիւր ազնիւ
մարդուն, լինի նա հաւատացեալ թէ անհաւատ,
սաստիկ անախորժ, զղուշիլ միայն միայն կարող
են պատճառել:

Օգնեցէք, որ կաթողիկ պատէրը 8 դրուշով մի
կիսամեռ դիմէ առնէ...

Հայր Եարմրտան կաթողիկ եկեղեցւո մէջ մի
պարզ եպիսկոպոս է միայն: Ինչո՞ւ դարձանք,
որ Վանում սովի սարսափների հովանու տակ
կատարած հաւատորոսական հունձը յանցաւոր,
անվայել չը թաւալ նրան, երբ ինքը, կաթողիկ
եկեղեցւո հօգը պետք, Հռօմի քահանայապետ
և Պապոս առաքելալի յաջորդ Լեոն XIII իր
բարեհաճութիւնը ցոյց տուեց և Տ. Զնոյայանին
հասցրած 20,000 ֆրանկի մի «վնասնա՞ն պար-
գնով» օրհնեց ու վաւերացրեց «առաքելական»
վաճառքը: Այնքան բարձր ու հեղինակաւոր մի

(Կը շարունակվի)

*) Հետաքրքիր/ողներին յանձնարարում ենք կարգ-
արոժեսոր Կարէկէլի «Исторія Западной Европы
новое время» անունով գեղեցիկ աշխատութիւնը:

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбелиановская ул., № 27.